



373
7-53

0120-10

73(47.925)
Պ-53

ՊԵՐՊԵՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

1876

Կ. ՊՈԼԻՍ—ԻԻՍԿԻԻՏԱՐ

ՏՆՕՐԷՆԻՆ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ


1910—1911

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՇՐՋԱՆԻՆ



0 120 - 10
Kevork

370
ՊԵ 7-53-53
373
ԿՄ



ՎՈՐԻՈՒՆԸ ԵՒ ԻՒՐ ՊԱՐՏԵՐԸ

1004
16262

ՊԵՐՊԵՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

1876

Կ. ՊՈԼԻՍ-ԻՒՍԿԻՏԱՐ

ՏՆՕՐԷՆԻՆ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

1910—1911

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՇՐՋԱՆԻՆ

Հ.Ս.Խ.Զ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԳՐԱՆ
С.С.Р.-А. Публичная Библиотека
7/21. 1922
ՎՈՅՆԱՆ ԱՅՈՒՆԻՍՏՐԱԿՆԻ ԱՆՎԱՆ
Имяна. Мясникова

22 JUL 2013

ՊԷՐՊԷՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ
 1910—1911 ՇՐՋԱՆԻ
 ՕՐԱՑՈՅՑԸ

Բացում Երջանին	Չորեքշաբթի,	Սեպտ.	1,	1910
Սկիզբ Դասերու	»	»	8	»
Օր Հիմնարկութեան Վարժարանին . . .	Ուրբաթ,	Հոկտ.	1	»
Հիմնադրին Սնունտի Տարեդարձ . . .	Շաբաթ,	»	23	»
Ս. Կիսամեայի Արդեանց Հրատարակում	»	Ապրիլ	2,	1911
Հիմնադրին Մանուկան Տարեդարձ* . . .	Ուրբաթ,	«	8	»
Տարեկան Պատշաճ	Հինգշաբթի,	Մայիս	19	»
Տարեկան Քննութիւն	Երկուշաբթի,	»	30	»
Օր Արտասանութեանց	Կիրակի,	Յունիս	5	»
Տարեկան Հանդես	Ուրբաթ,	»	17	»
Փակում Երջանին	Երկուշաբթի,	»	20	»

1911—1912 ՇՐՋԱՆԻ

Բացումը	Հինգշաբթի,	Սեպտ.	1,	1911
Սկիզբ Դասերու	»	»	8	»

* Հիմնադրին մանուկան տարեդարձին առթիւ հանդիսութիւնները տեղի ունեցան
 Ապրիլ 24ին.

ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Յովհ. Ռ. Պէրպէրեան, Licencié ès sciences Math. et Phys. *Տեօրեմ.*

Ուսողութիւն, Բնագիտութիւն:

Արամ Նիկողոսեան, Շրջանաւարտ Պէրպէրեան վարժարանի, *Բ. Տեօրեմ.*

Հոգեբանութիւն, Բնական Պատմութիւն, Ֆրանսերէն, Օսմաներէն, Մարմնամարզ:

Լեւոն Թաւանեան, Շրջանաւարտ Պէրպէրեան վարժարանի, Անդամ Ընթիւն վարչ.,

Ընկերական Գիտութիւնք, Հայերէն, Ֆրանսերէն:

Նսան Պալճեան, Ingénieur Agronome, Մ'օնթէլլիէի Համալսարանէն.

Երկրագործութիւն:

Սեփան Կուրսիկեան, Հեղուագետ.

Օսմաներէն, Արաբերէն, Պարսկերէն, Օսմ. Գրականութիւն:

Պարեգիւն Պալաճեան, Թուագետ.

Թուարանութիւն, Առեւտրական Ուսողութիւն:

Իգնատիոս Մուրատեան, Շրջանաւարտ Շահնազարեան վարժարանի.

Բնալուծութիւն և պետ Բնալուծական աշխատանքի:

Թովմաս Անէմեան, Տնօրէն Ներսիսեան Ազգ. վարժարանին, Իճատիլէ.

Հայերէն Գրարար:

Տիրան Զրաբեան, Շրջանաւարտ Պէրպէրեան վարժարանի.

Գրագիտութիւն, Շարադրութիւն, Արդի Հայ. Մատենագրութիւն:

Միխայէլ Շամսանեան, Հայրցիկի Համալսարանէն.

Գերմաներէն լեզու, Պատմ. Իմաստասիրութեան:

Էժովէն Լէօպա, Licencié ès Lettres և Cand. Docteur ès Lettres,

Ֆրանսերէն և Ֆրանս. Մատենագրութիւն:

Նէնիմէսիկ Պէլյ. Շրջանաւարտ Կ. Պոլսոյ Իրաւաբանական վարժարանէն.

Առեւտրական Իրաւաբանութիւն, Օսմ. Պատմութիւն, Ընդհ. Իրաւաբանութիւն:

Տիգրան Զեօկիւրեան, Շրջանաւարտ Պէրպէրեան Վարժարանի.
Աշխարհագրութիւն, Պատմութիւն, Անգղիական Մատենագրութիւն:

Գառնիկ Շէիւրիկեան, Շրջանաւարտ Պէրպէրեան Վարժարանի.
Առեւտրական բաժինին Մասնագետ Ուսուցիչ:

Գառնիկ Սիրունեան, Շրջանաւարտ Ռօպէրթ Գօլէմի.
Անգղիերէն, Առեւտրական Թղթակցութիւն:

Արմենակ Պաղսաթեան, Շրջանաւարտ Պէրպէրեան Վարժարանի.
Թուարանութիւն, Երկրաչափութիւն, Օսմաներէն, Հայերէն:

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Էսկառ Մանաս, Վկայեալ Վենետիկի Գօնսէնովաթուռէն.
Զայնական Երաժշտութիւն:

Սեփան Բաբելեան, Շրջանաւարտ Պէրպէրեան Վարժարանի.
Դաշնակ, Զայնական Երաժշտութիւն:

Բիբիօ, Զուծակ:

Սիմոն Յակոբեան, Վկայեալ Կ. Պոլսոյ Գեղարուեստից Վարժարանէն.
Գծագրութիւն:

Վրբանէս Էսմէրեան, Վարժարանին Ֆանֆառի խումբին պետ:

Լեւոն Օհանեան, Շրջանաւարտ Պարտիզակի Գօլէմի.
Նախապատրաստականի Դասապետ:

ՏՕԲԹ. ԲԱՐԱՂԱՄԵԱՆ, Վարժարանին Բժիշկը:

ՏՕԲԹ. ՇԱՀԱՆ ԷՖ. Ռ. ՊԷՐՊԷՐԵԱՆ


ՄՕՏԱՆՈՒՏ Թուականի մը, Բարիզի համալսարանին Կաճառին առ-
ջե Շահան էֆ. Պէրպէրեան, վարժարանին Հիմնադրին կրտսեր որդին,
իւր Doctorath դեզը պիտի պաշտպանէ եւ պիտի ստանայ Docteur ès
Lettres տիտղոսը. անմիջապէս վերջ պիտի վերադարնայ Պօլիս եւ վար-
ժարանին մէջ հաստատուի:

Բարիզ անցուցած երեք տարիներու ընթացքին հետեւած է իմաս-
տասիրական ուսմանց եւ մանկավարժութեան:

Վերջերս առիթը ունեցաւ ներկայ գտնուելու Իտալիոյ մէջ սար-
քուած իմաստասիրական հինգերորդ Համաժողովին ուր տեղի ունեցած
վիճաբանութեանց մասնակից եղաւ յաջողութեամբ ինչպէս կը վկայեն
հասած տեղեկագիրները:

Իւր կատարած լուրջ աշխատութիւնները մեծ գրաւական մըն են
Հաստատութեանս ապագային համար: Յաջորդ 1911-12 տարեշրջանէն
սկսեալ Շահան էֆ. պիտի նուիրէ իւր գործունէութիւնը վարժարանին
որ փայլուն արդիւնքներ կ'ակնկալէ իր նման կորովի, հմուտ, բանիբուն
մէկէ մը:

Պիտի դասախօսէ իմաստասիրութեան, Քաղաքական տնտեսու-
թեան, բարոյականի եւ Գրական բաժինի զլիսաւոր դասերը: Իսկ մաս-
նաւորապէս պիտի հսկէ մօտէն աշակերտներուն աշխատութեանցը վրայ:





ՄԱՐԿՈՍ ԳՐԱԴԱՐԱՆ

ՊԵՐՊԵՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ

«ԳԱՏԸԳԻԻՂ, Լատին եկեղեցւոյ փողոցին ծայրը միջակ մեծութեամբ տան մը մէջ կը հիմնուէր Պերպերեան վարժարանը լռին ու անձայն կերպով: 1876 տարւոյն ղարոցական արձակուրդի ամիսներուն մէջ ու Սեպտեմբերին ալ, անդու ու կատաղի պայքար մը մղած էի նիւթական հազարումէկ դժուարութեանց դէմ՝ հասնելէ յառաջ Հասկար 1 թուականին ուր դասերու սկզբնաւորութիւնն ազդարարող առաջին զանգակն հնչուեցաւ Պերպերեան ղարոցին:» Հիմնադիրը այսպէս կը խօսի վարժարանին հիմնարկութեան պարագաներուն վրայ իր յօբելանին՝ Մարկոսի խմբագրութեան ուղղած նամակին մէջ:

Կարի ազդուած ազգային վարժարաններու մէջ սովորական՝ աղայական քմահաճ ընթացքներէն որոնց երեսէն կրթական գործը կը տուժէր, Ռէթէոս Պերպերեան կ'որոշէ հիմնել կրթական անկախ հաստատութիւն մը որ ծառայէ միայն եւ ճշմարտապէս դաստիարակութեան գործին: Յայտնապէս ծանրաբեռն աշխատութեան մը կը ձեռնարկէ. սակայն պահ մը իսկ չի վարանիր իւր նիւթական անձուկ միջոցներուն եւ ամէնազգի դժուարութեանց ստեղծած աննպաստ պայմաններուն առջեւ, այլ կը վստահի բանիմաց իւր կորովին՝ մինչ բարեացակամ համակիրներու խումբ մը քաջալեր կը հանդիսանայ իւր գործին:

Առաջին շրջանը կ'սկսի չորս դասարաններով եւ 28 աշակերտներով միայն. 13 ուսուցիչներ կը դասախօսեն ընդ որս մի քանի օտարազգիներ: Երկրորդ ղարոցական տարիին՝ աշակերտներուն թիւը 37ի կը բարձրանայ որոց 19ը գիշերօթիկ: Այս տարւոյն վերջը (1878 Օգոստոս) վարժարանը կ'ունենայ իւր անդրանիկ շրջանաւարտները, Համբարձում Պերպերեան, Լեւոն Տէմիրճիպաշեան եւ Յովհաննէս

Արամեան: Երրորդ տարեշրջանին սկիզբը գիշերօթիկ եւ ցերեկեայ աշակերտաց թիւը աւելնալով շէնքին սահմանները նեղ կու գան եւ հակառակ Գատը գիւղցիներու թախանձանքին՝ Պէրպէրեան կ'ստիպուի թողուլ Գատը գիւղը եւ փոխադրուիլ Սկիւտար Իճատիյէ ընդարձակ շէնքի մը մէջ ուր գիշերօթիկներու թիւը շուտով 50ի կը հասնի: Դարձեալ տեղւոյն անձկութենէն հիմնադիրը կը հարկադրուի վարձելու արդի շէնքը ուր չորրորդ տարեշրջանը կ'սկսի (1879 Սեպտեմբեր): Աշակերտներուն յարճուն թիւին պատճառաւ պահ մը կը վարձուի նաեւ Օտեանց դրացի բնակարանը, սակայն յաջորդող շրջաններուն այդ շէնքը չգործածուիր, այլ ընդհակառակն ջանք կը տարուի ընդարձակել դպրոցին շէնքը զանազան յաւելումներով:

1876էն ի վեր հաստատուած չորս դասարանները որոնց բարձրագոյնը Երիցագոյն կարգն էր, չեն բաւեր իրագործելու մտադրուած ծրագիրը որով հարկ կը տեսնուի 1884ին հաստատել նոր դասարան մը որ Աւագ կը կոչուի: Այս յաւելումով վարժարանը կ'ունենայ երկրորդական ուսմանց ամբողջ ծրագիր մը. քիչ յետոյ կառավարութիւնը էրպէս (7 տարուան) աստիճանով պաշտօնապէս կը ճանչնայ Պէրպէրեան վարժարանը յղելով Տնօրէնութեան մասնաւոր թէզքերէ մը:

Իրարու կը յաջորդեն բեղմնաւոր շրջաններ. Հիմնադիրը կը գրէ իւր յիշատակներուն մէջ «... անվրդով աշխատութեան յարմարագոյն վայր մ'էր Իսկիւտար. կամաց կամաց ինձ աշակերտեալներու նորահաս սերունդներ կը կազմուէին որք ամէն քայլիս դէմս կ'ելլէին հոգւոյ ազգականութեան ժպիտ մը իրենց աչքերուն մէջ»:

Ժամանակակիցները կը յիշեն 1882—1896ի փայլուն այն տարեկան հանդէսները ուր իրենց ներկայութեան շուքը կ'ածէին Խրիմեաններ, Իզմիրլեաններ, Մելքիսեղեկ Մուրատեաններ, Մամուրեաններ, Տէմիրճիպաշեաններ, ատենուան Պատրիարքներ, բարձրաստիճան եկեղեցականներ, գրական եւ առեւտրական ասպարէզներու մէջ ծանօթներ եւ որոց ներկայ կը գտնուէր նաեւ համակիր խումուն բազմութիւն մը: Պէրպէրեանի հանդէսները հանգամանքը ունէին տեսակ մը ազգային տօնի ուր հայուն հոգին կը հրճուէր եւ ուր կը ծափահարուէր հայրենասիրութիւնը:

Մինչեւ 1896ի ամառը վարժարանը ունի կրթական լիաբուն արգասաւորութիւն. շրջակայներէն, նա մանաւանդ գաւառներէն պատա-

նիները կը հասնին յագուրդ տալու ուսման եւ կրթութեան իրենց պապակին. այս հոսանքը սակայն ընդոստ կը կասի. 96ի Օգոստոսին դէպքը, ծանօթ իր հետեւանքներով, սարսափը կը տարածէ հայկական բոլոր գաւառներուն մէջ, հայաբնակ ամէն տեղ: Հիմնադիրը պահ մը կ'որոշէ ձգել Պօլիսը եւ իւր ընտանիքին հետ կը մեկնի Ժընէվ: Վարժարանը կը շարունակուի. յաջորդ ամառը մէկ շրջանաւարտ կու տայ միայն:

1898ը Օգոստոսին՝ Ռէթէոս Պէրպէրեան կը վերադարնայ վերըստանձնելու իւր վարժարանին Տնօրէնութիւնը. հարկաւ Եւրոպայի մէջ անցուցած ժամանակը բեղմնաւոր կ'ըլլայ մանկավարժական թելադրութիւններու տեսակէտով եւ իւր դարձին կը ներմուծէ կարգ մը փոփոխութիւններ յարակից ներքին կանոնագրին եւ ոչ անշուշտ ընդհանուր ուղղութեան որ ի վաղուց իւր վերջնական ձեւը զգեցած էր նուիրագործուելով ալ իւր փառաւոր արդիւնքներով:

Քիչ յետոյ տեղի կ'ունենայ իւր կնոջը մահը (1899) «... Իսկիւտար պիտի շղթայէր զիս երջանկութեան եւ դժբաղդութեան ամենէն ամուր շղթաներովը: ... աւա՜ղ անոր հողերուն վրայ ամենէն լեղի արցունքներս պիտի լայի:» (Քառորդ դարու յիշատակներ, Մասիս 50րդ տարի, 43 թիւ) Իւր վշտին հաւատարիմ, սակայն նոր կորովով մը ձեռք կ'առնէ իւր գործը. որոշապէս կարելի է ըսել որ վարժարանը կը մտնէ երկրորդ շրջանի մը մէջ. ընդարձակագոյն Հուսկ Բանքերը այս շրջանին գրուած են. ինք նահապետի մը դիրքը ունի այլ եւս:

Վարժարանին շէնքը որ սեփականութիւնն էր Բաստըրմաճեանի եւ Մագսուտ Սիմոն Պէյի, շնորհիւ Հիմնադրին ճիգերուն եւ կալուածատէրերուն բարեացակամութեան, Հիմնադրին սեփականութիւնը կ'ըլլայ 1900ին:

1901ին արդէն քառորդ դար մը գործունէութիւն ունէր վարժարանը: Ուստի Պէրպէրեան Սաները, որոց մեծամասնութիւնը հասած էր պատուաւոր դիրքերու, գաղափարը կը յղանան տօնելու վարժարանին 25 ամեակը հանուր Ազգին մասնակցութեամբ, յարգանք մը մատուցանելու համար իրենց Դաստիարակին ու Ազգին Գրագետ-Գործիչին:

Օրմանեան Արքեպիսկոպոս այս գեղեցիկ շարժումին գլուխ կը կանգնի ստանձնելով նախագահութիւնը Պէրպէրեան Յոբելեանի Յանձնախումբին: 1901 Հոկտեմբեր 28ին շքեղ հանդիսաւորութեամբ կը տօնուի վարժարանին սրահներուն մէջ Յոբելեանը: Նուիրատուութեանց համագումար 1000 օսմ. ոսկինոց չէք մը կը յանձնուի Յոբելեարին:

Այլազան տեղերէ եւ անձնաւորութիւններէ նուէրներ, նամակներ եւ հեռագրեր կը տեղան . օտարազգի համակրութիւններ կ'արտայայտուին . իսկ Խրիմեան Ս. Կաթողիկոսը Անդրարարատեան իւր Գահէն դրուատակից կոնդակով մը Ուսուցչապետ տիտղոսը կ'ընծայէ արժանաւոր Յոբելեարին :

1000 ոսկւոյ գումարին վրայ 300 ոսկւոյ չափ Հիմնադիրը իր կողմէ աւելցնելով 1902ի ամառը վարժարանը հիմնովին կը վերանորոգուի (ճարտարապետ Արամ Թահթաճեան) . ննջարաններ եւ դասարաններ կ'աւելնան , եւ առողջապահիկ պայմանները կը լրացուին :

Յաջորդ շրջաններուն շրջանաւարտները հետզհետէ աւելի ստուար թիւով կ'ելնեն : 1904 տարւոյ տեղեկագրին մէջ կ'ըսուի . «Պէրպէրեան վարժարանը իւր գոյութեան ընթացքին մէջ այս ամ ամենէն ճոխ հունձքը կը քաղէ շրջանաւարտներու որք թիւով 17 են . . . կը յուսամ որ յետ այսորիկ պիտի շարունակուի այսպէս առատ արտաբերութիւնը վարժարանիս :»

1907 Ապրիլ 8ը դժնդակ թուականն է վարժարանին : Հիմնադրին մահուան թուականը :

Օրմանեան Սրբազանը իւր անձը իբր երաշխաւոր ներկայացնելով կառավարութեան , վարժարանը կը շարունակէ իւր ընթացքը :


Սակայն 1908ի ամառը Օսմ. Սահմանադրութեան վերահաստատուելով կ'իյնայ տիրող կառավարութիւնը , որով Հիմնադրին երեց որդին Յ. Ռ. Պէրպէրեան , որ տարիէ մը ի վեր իւր համալսարանական կրթութիւնը աւարտած՝ Եւրոպայէն վերադարձած էր , կ'ստանձնէ վարժարանին Պատասխանատուութիւնը եւ Տնօրէնութիւնը :

Այժմ այս վերջին ձեւին մէջ վարժարանը կը շարունակէ իր ընթացքը :

Պէրպէրեան վարժարանի ընթացաւարտ սաները թիւով 278 են , իսկ բազմաթիւ թերաւարտները : Զանազան ասպարէզներու մէջ Պէրպէրեան Սաները այսօր զրաւած են նախանձելի դիրքեր եւ բարձր կը պահեն Պէրպէրեան վարժարանի համբաւը :

1004
16962





ՅՅՍՈՒՄՈՒՄ ԱՆՍՆՈՒՄ ԳՈՒՐՈՒՄ

ՊԷՐՊԷՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ ԿԱՐԵՒՈՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԱՐԺԱՐԱՆԻ ԴԻՐՔԸ ԵՒ ՏԱՐԱՆՈՒԹԻՒՆԸ.

Վարժարանը կը գտնուի Իսկիտարի հաճոյատեսիլ եւ հովասուն բարձանց վրայ. Իճատիյէի եւ Եէսի Մահալլէի թաղերուն մէջ գտնուող բլրակին մէկ մասը կը գրաւէ. երկուստեկ ծառաստաններ կան. ունի ընդարձակ գետին մը որ վեց հազար քառակուսի մէրը է: Շէնքը յաջորդական յաւելումներով ստացած է կարեւոր ընդլայնում մը. կրնայ պարունակել 100 գիշերօթիկ եւ 150 ցերեկեայ: Իւր յատակագծին տարածութիւնն է 1000 քառակուսի մէրը: Խոհանոցը եւ լուսարանը կը կազմեն առանձին շէնք մը: Դասարանները խիստ լաւ լուսավորուած են եւ օդասուն, ինչպէս ննջարանները որոնք ընդարձակ սրահներ են առ հասարակ 10ական անկողինով: Ճաշարանը նոյնպէս ընդարձակ սրահ մըն է դպրոցին շէնքէն զրեթէ անջատուած:

ԴՊՐՈՑՍԿԱՆ ՏԱՐԻՆ.

Դպրոցական տարին կ'սկսի 1 Սեպտեմբերին. կը բաժնուի երկու կիսամեաներու. առաջինը կը տեւէ 1 Սեպտեմբերէն մինչեւ 31 Յունուար. Բ.ը Փետրուար 1էն մինչեւ Յունիս 20: Շրջանին ընթացքին երեք արձակուրդներ կան, Ծնունդի, Բարեկենդանի եւ Զատիկի, որոնց իւրաքանչիւրը շաբաթ մը կը տեւէ. վարժարանը նաեւ փակ է Հայ Եկեղեցւոյ Տաղաւարի տօներուն: Մեծ արձակուրդը կը տեւէ երկու ամիս եւ 10 օր:

ՈՒՍՈՒՄԸ.

Ուսումնական ընթացքը կը տեւէ 8 տարի. կը բաժնուի երկու շրջանի. Նախապատրաստական շրջան (Երախայից Ա. Բ. Գ. տարիները) եւ Երկրորդական ուսմանց շրջան (Կրտսերագոյն, Կրտսեր, Երէց, Երիցագոյն, Աւագ). կ'առաջնորդէ աշակերտները Իտալիայի (Baccalauréat) վկայականին:

Վարժարանը ունի Առեւտրական, Գիտական եւ Գրական (Մանկավարժական) հատուածներ:

Ուսուցչական մարմինը կը բաղկանայ 23 անդամներէ:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ .

Ց տարեկանէն սկսեալ տղաքները կ'ընդունուին: Տնօրէնութիւնը փափաքողներուն կ'ուղարկէ ցանկը այն պիտանի առարկաներուն զորս գիշերօթիկ աշակերտը պարտի իւր հետը բերել վարժարան մտած ատեն:

ՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐ .

Շրջանին մէջ երկու քննութիւններ տեղի կ'ունենան. մին Բարեկենդանի արձակուրդէն երկու շաբաթ առաջ. կ'անուանուի Ա. կիսամեայի քննութիւն. ըստ արդեանց, աշակերտներուն մէջ դասակարգութիւն մը տեղի կ'ունենայ: Բ.ը որ կը կոչուի տարեկան քննութիւն՝ կը կատարուի Յունիս ամսոյ մէջ. այս քննութիւնները կ'որոշեն աշակերտին կարգափոխութիւնը:

ՄՏԻՅ ՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐ .

Ազգային վարժարանէ ընթացաւարտ աշակերտները առանց քրննութեան կ'ընդունուին Կրտսերագոյն կարգը: Երբ նորամուտ աշակերտը ուրիշ երկրորդական վարժարանէ մը կու գայ, իւր մտադրած դասարանը մտնելու համար պարտի աստիճան մը վար դասարանին տարեկան բոլոր քննութիւնները անցնել:


ՎԻՃԱԿԱՅՈՅՑ ՏԵՏՐ .

Երկու ամիսը մի անգամ աշակերտներու կը յանձնուի վիճակացոյց տետր մը ուր նշանակուած է իրենց աշխատութեանց ամսական արդիւնքը. աշակերտները պարտաւոր են այս տետրը իրենց ծնողքին կամ պաշտպանին ներկայացնել ու վերադարձնել:

ՕՐՈՒԱՆ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ .

(Ժամը Եւրոպական Կ)

Զարթնում	Ժամը 6ին քառորդ մնալով
Մարմնամարզ	» 6 — 6 ¹ / ₂
Սերտողութիւն	» 6 ¹ / ₂ — 7 ¹ / ₂
Նախահաւ	» 7 ¹ / ₂
Առաւօտեան Զբօսանք	» 7 ¹ / ₂ — 8 ¹ / ₂
Սկիզբ դասերու	» 8 ¹ / ₂



ՊՐՈՍՊԵՐ

Քառորդ ժամ դադարով 3 պահ դաս	Ժամը	8 ¹ / ₂ —11 ¹ / ₂
Յերեկուան հաս	»	12 ին քառորդ մնալով
Յերեկուան զբօսանք	»	12 — 1 ¹ / ₂
Երկու կամ երեք պահ դաս ցերեկեկն վերջ (*)	»	1 ¹ / ₂ —3 ¹ / ₂ կամ 1 ¹ / ₂ —4 ¹ / ₂
Նախընթիվ	»	3 ¹ / ₂ կամ 4 ¹ / ₂
Երեկոյեան զբօսանք	»	3 ¹ / ₂ —5 կամ 4 ¹ / ₂ —5 ¹ / ₂
Սերտուրքիւն	»	5—7 կամ 5 ¹ / ₂ —7
Երեկոյեան ընթիվ	»	7
Երեկոյեան զբօսանք	»	7—8
Ազատ սերտուրքիւն	»	8—9
Նինջ	»	9 ին


ԾՆՈՂՔՆԵՐԸ .


Ծնողքները կրնան տեսնել իրենց զաւակները կիրակի օրերը . ամսագլուխներուն արդէն գիշերօթիկ աշակերտները կ'արտօնուին իրենց ծնողաց մօտ երթալու : Իսկ լուր օրեր այցելուներ երբ փափաքին տեսնել աշակերտ մը պարտին սպասել դասաժամին լրանալուն հիրասրահին մէջ : Տնօրէնութիւնը ստիպողաբար կը հաշտութե թաւառայե ծնողաց որ իրենց զաւակաց Պալատի վարչութեան թործեր վե յանջեն . աշակերտները բացի ամսագլուխներէ եւ տօնական արձակուրդներէն վարժարանէն հեռանալու արտօնութիւն չունին :

ՎՃԱՐՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ .

Տարեթոշակը կը վճարուի երկու անգամէն . Ա. կիսամեայ թոշակը կը գանձուի օգոստոսի 1-ին և ապա աշակերտին վարժարան մտած պահուն : Առանց այս կանխիկ վճարման աշակերտը չընդունուիր : Բ. կիսամեայ թոշակը կը գանձուի Յունուար 1էն մինչեւ Փետրուար 1 (վերջին պայմանաժամ) : Սկսուած կիսամեայ շրջան մը պարտական կ'ընէ աշակերտին ծնողքը այդ կիսամեայի թոշակին ամբողջական վճարման :

(*) Չորեքսրբի եւ ուրբաք օրերը միայն կէս օրէ վերջ 3 պահ դաս կայ : Մէկ պահը յիսուն վայրկեան է :





ՏՆՕՐԷՆԻՆ ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԱՆՆԱԿԸ

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

1910—1911

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՇՐՋԱՆԻՆ

1910ին հաստատուած սովորութեան համեմատ կը ներկայացընենք Պատ. Հասարակութեան 1910—11 դպրոցական շրջանին տեղեկագիրը: Ընթերցողը յաջորդական խորագիրներու ներքեւ ներկայացուած պիտի գտնէ Հաստատութեան պարզած վիճակը այս շրջանին մէջ:

ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆԸ

Ուսուցչական մարմինը շրջանին սկիզբը կրեց հետեւեալ փոփոխութիւնները. Հայերէնի ուսուցիչ Յարութիւն էֆ. Մրմրեան հրաժարելով, Տնօրէնութիւնը իրեն յաջորդ նշանակեց Թովմաս էֆ. Աճէմեան:

Ֆրանսացի Մէօսիէօ Ժիլիա, փափաքելով Ռուսիոյ մէջ պաշտօնավարել, ստիպուեցաւ ձգել իւր ներքին ուսուցչութեան պաշտօնը. իւր տեղը հրաւիրուեցաւ Զուիցերեացի Մէօսիէօ Լէօպա, համալսարանէ վկայուած:

Արմենակ էֆ. Պաղտատլեան, վարժարանիս նախկին սաներէն, որ 1909—10 շրջանին համար արդէն պաշտօնի հրաւիրուած էր եւ անակնկալ պատճառով չէր կրցած գալ, հաստատուեցաւ այս տարի ընտանեօք վարժարանիս մէջ ստանձնելով Երէց եւ Կրտսեր կարգերու դասապետ ուսուցչութիւնը եւ ուսողութեան, եւ լեզուի դասեր:

Գերմաներէն լեզուի դասախօսութիւնները յանձնուեցան Միքայել էֆ. Շամտանճեանի որ փոխանորդեց Մ. Էլմնէօի:

Մէհմէտ Ալի պէյ հարկադրուած ըլլալով տնօրէնութեան պաշտօնով Ռումէլի մեկնիլ, իւր դասախօսութիւնները ստանձնեց Նէմէտտին պէյ:

Խաչիկ էֆ. Թահթաճեանի գծագրութեան դասերը, իր հրատարե-
լուն պատճառաւ ստանձնեց Բ. Տնօրէն Նիկողոսեան էֆէնտի:

ԿԱՐԳԱՊԱՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ

Վարժարանին մէջ տիրող բոլոր կարգապահական կանոններուն
ամփոփումով առանձինն տետր մը կազմուեցաւ. այս տետրէն տրուեցաւ
իւրաքանչիւր աշակերտի: Աշակերտներուն կարգապահութիւնը դպրոցա-
կան բովանդակ շրջանին, գովելի վիճակ մը պարզեց:

ՖԻԶԻԲԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ


Տնօրէնութիւնը հոգածու եղաւ ֆիզիքական կրթութիւնը մշակե-
լու աշակերտներուն մէջ:

Ամէն առաւօտ իրենց զարթնումէն անմիջապէս վերջ, գիշերօթիկ-
ները առաջնորդութեամբ Արամ էֆ. Նիկողոսեանի, կէս ժամու տետ-
րութեամբ ըրին Շուէտական մարզանք. արդիւնքները զգալի են. աշա-
կերտներուն, կուրծքի վզի, թնթերններու չափերը յայտնապէս առաւելու-
թիւններ կրած են: Տարեկան մեծ պտոյտին որ կատարուեցաւ 19 Մայիս
հինգշաբթի օրը, տեղի ունեցան մրցումներ երկարատեւ եւ արագ վազքի,
բարձր եւ հեռուն ցատկելու եւ յաջողներուն ոսկի եւ արծաթ միտալներ
տրուեցաւ: Տնօրէնութիւնը որոշեց նաեւ տարեկան հանդէսին Գազազ-
եան մրցանակով պատուել մարմնամարզական կրթութեան մէջ լաւագոյն
արդիւնքները ձեռք ձգող աշակերտը:

Առողջապահութեան դասը խնամով տրուեցաւ բոլոր դասարան-
ներուն մէջ: Վարժարանին յատուկ բժիշկը իւր խրատներուն առարկայ
ըրաւ անոնց կարօտ աշակերտները. աչալուրջ հսկողութեան մը են-
թարկուեցան միշտ պատահական հիւանդութիւններով տկարացող աշա-
կերտները որոնց դեղը եւ դարմանը ժամանակին փութացուեցաւ:

Ֆութպօլի Ընկերութիւնը արդիւնալից շրջան մը անցուց. մաս-
նակցող աշակերտներուն թիւը կրնայ տակաւին ստուարանալ. կ'ակնկա-
լենք այս յառաջդիմութիւնը յաջորդ շրջանին մէջ:

Պտոյտներ այլազան տեղեր կատարուեցան. շաբաթուան մէջ երեք



ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

երեկոյ՝ երեքշաբթի, հինգշաբթի եւ շաբաթ, աշակերտները ընկերութեամբ ուսուցիչներու, վարժարանէն դուրս, շրջակայները պտոյտներ ըրին ամէն անգամ որ օդը թոյլատրեց: Կիրակի օրերը աւելի ընդարձակ աստիճանի մը վրայ կատարուեցան պտոյտները:

Վարժարանին աշակերտներուն առողջական վիճակը շատ լաւ էր այս շրջանին: Ծանր հիւանդութենէ տառապող աշակերտ բնաւ չունեցանք. քօլէրայի շրջանը անվնաս անցուցինք, անտարակոյս ամէն նախ-զգուշական պայմանները ապահովելով վարժարանին մէջ. ժամանակին այդ մասին հարկ եղած տեղեկութիւնները մասնաւոր շրջաբերական նամակով մը հաղորթեցինք Պատ. Ծնողաց: Այս ձեւով անհրաժեշտ հանգամանքն ալ չունեցաւ անհարկի ո եւ է ազդեցութիւն տղոց առողջութեան վրայ: Վարժարանին մաքրութեան եւ տղայոց մաքրասիրութեան հարկ եղած ուշադրութիւնը նուիրուեցաւ:

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ, ԼՍԱՐԱՆՆԵՐ

Տնօրէնութիւնը միշտ նկատած է վարժարանին բոլոր աշակերտները իբր մէկ ընտանիքի մը անդամներ եւ ջանացած՝ այլազան առիթներով զգացնել ընտանեկան կապը աշակերտներուն. մթնոլորտը պէտք է բարոյացուցիչ ըլլայ վարժարանին մէջ եւ այսպիսի մթնոլորտ մը ստեղծելու համար Տնօրէնութիւնը քաջալերած է ամէն այն ձեռնարկները որոնց նպատակն է եղած աշակերտները պահել ընտիր ազդեցութիւններու ներքեւ:

Այսպէս, ընտանեկան հաւաքոյթները, վարժարանին մէջ բնակող Նիկողոսեան եւ Պաղտատեան ընտանեաց մօտ, առիթը ընծայեցին աշակերտներուն անցնելու շահեկան պահեր եւ կրթելու իրենց ընկերական ձիրքերը. մասնաւորապէս նոր տարիի առթիւ վարժարանին մէջ մնացող գիշերօթիկները հաճելի կազանդ մը ըրին ամենուն հետ հաւաքուած:

Սարքուեցան այլազան լսարաններ ուր պարզուած նիւթերը իրենց բարոյացուցիչ հանգամանքովը բարերար տպաւորութեանց ենթարկեցին աշակերտները. այս լսարանները քանի մը կերպով տեղի ունեցան: Աշակերտները իրենք իրենց մէջ կազմակերպեցին վիճաբանական լսարաններ ուր խորհրդածութեան նիւթ եղած են Հոգեւորականութեան և Նիւթաւորութեան

նիւթերը՝ պատրաստուած զանազան աշակերտներու կողմէ, ենթարկուեցան վիճաբանութեան ունկնդիր աշակերտներէն. ներկայ գտնուող ուսուցիչը իբր վերջաբան ամփոփած է յայտնուած տարակարծիք խորհրդածութիւնները եւ անոնցմէ հետեւութեան մը յանգած:

Այս լսարանները գրեթէ ամէն շաբաթ տեղի ունեցած են: Իւրաքանչիւր դասարան ալ սարքած է լսարաններ ուր կարդացուած են այդ դասարանին աշակերտներուն գրած շարադրութիւնները:

Ամսական լսարաններուն խօսեցան ուսուցիչները: Նուազի բաժին մ'ալ ունեցան այս հաւաքոյթները ամէն անգամ. աշակերտները երախտագիտութեամբ մտիկ ըրին քանիցս դաշնակահար Ստեփան էֆ. Բաբելեանի տաղանդաւոր արուեստագետին նուազած կտորները. Տիկին Շէհ-րիկեան եւս բարեացակամութիւնը ունեցաւ իւր դաշնակահարի տաղանդին շնորհներուն մասնակից ընելու մեր աշակերտները: Վարժարանին երգչախումբը շատ յաջողութեամբ ամէն անգամ երգեց ընտիր խմբերգներ, նա մանաւանդ մի քանին Կոմիտաս վարդապետին հեղինակածներէն:

Բանախօսներէն Տիրան էֆ. Ջրաքեան խօսեցաւ հոգեկան եւ ֆիզիքական կեանքերուն իրարու վրայ փոխադարձ ազդեցութեան մասին. Մէօսիէօ Լէօպա, Էմիլ Զօլայի գրականութեան վրայ. Արամ էֆ. Նիկողոսեան լաւ յիշողութեան մը պայմանները թուեց, զայն լաւ գործածելու միջոցներուն վրայ ծանրացաւ. իսկ Տնօրէնը խօսեցաւ այլախորութեան զգացումին վրայ. ըսաւ թէ մարդուն վայելող զգացում մըն է ան որով մարդ կրնայ իրական յարգանքի առարկայ դառնալ:

Աշակերտները կազմակերպեցին Յ. Միութեան լսարանին մէջ մեծ լսարան մը որուն մէջ բանախօսելու հրաւիրեցին Օսմ. Երեսփոխան Տօքթ. Ն. Տաղաւարեան էֆէնտի. վարժարանին բոլոր համակիրները փութացած էին այս լսարանին որ մեծ յաջողութիւն գտաւ:

Մայրաքաղաքս այցելող Քրիստոնէական Ընկերութեան անդամներէն Mr. Armand Kuntz եւ Mr. Pierre Maury մեր աշակերտներուն խօսեցան բարոյական նիւթերու վրայ: Իսկ բարձրագոյն կարգի աշակերտները խմբովին ներկայ գտնուեցան Կալաթայի մէջ վերոյիշեալ ընկերութեան անդամներէն Mr. Graussի կողմէ եղած մէկ յոյժ հետաքրքրական բանախօսութեան որուն նիւթն էր «Բարոյականի մէջ մեր թերութիւնները»:

Կրտսեր կարգի աշակերտներուն համար այս շրջանին հաստատեցինք Բարեկերպութեան դասընթացք մը զոր ստանձնեց Բ. Տնօրէնը. հարկ չիկայ խօսելու դասին բարերար ազդեցութեան մասին աշակերտներուն վրայ: Այսպիսի դասեր պիտի հաստատուին նաեւ միւս վարի դասարաններուն մէջ. բարոյական կրթութեան անհրաժեշտ մաս կը կազմեն ասոնք:

Ներքին ուսուցիչները միշտ տղայոց վրայ խնամք ունեցան անոնց հետ միասին գտնուելով ամէն պատահալթիւ նա մանաւանդ դասի ժամերէն դուրս զբօսանքներուն. ճաշի ատեն եւ զբօսանքներու պահուն ծրարանացի Դուսուցիչը գտնուեցաւ աշակերտներու խումբերու մէջ եւ օգտակար եղաւ անոնց. աշակերտները իրենց վարմունքին եւ զգացումներուն մէջ միշտ հակակշռուած են իրենց մեծերէն:

Տղայոց մէջ կրօնական զգացումի պահպանման հոգածու գտնուեցանք ամէն կիրակի կանոնաւորաբար աշակերտները առաջնորդելով Եկեղեցի ինչպէս ամէն Սրբազան առիթներով: Ինչպէս Հիմնադիրը իր 1904ի տեղեկագիրին մէջ յայտնած է «Դպրոցը չի հակառակիր կրօնքի ոգւոյն եւ պէտք է հասկցուի թէ դպրոցն է մեծագոյն ոյժը Եկեղեցւոյն»: Ասով կ'ուզենք կարգ մը շփոթեալ մտքեր լուսաբանել ճշմարտութեան մասին:

Մ Ա Տ Ե Ն Ա Դ Ա Ր Ա Ն Ը

Տնօրէնութիւնը յանձնած է մատենադարանին պահպանման հոգը աշակերտներէն կազմուած յանձնախումբի որ այս շրջանին յաջող գործունէութիւն մը ցոյց տուաւ մատենադարանին գիրքերուն վրայ աւելցնելով հարիւրէ աւելի նոր գիրքեր, գրականութեան, գիտութեան եւ ընկերական գիտութեանց վերաբերեալ. այս մատենադարանէն օգտուեցան վարժարանին բոլոր աշակերտները վճարելով 1 ղրուշի ամսական գումար մը: Մատենադարանը բաժանորդ գրուեցաւ հայաթերթերու եւ թըրքերէն թերթերու, ինչպէս նաեւ շաբաթաթերթերու տեղական կամ օտար:

Դ Ա Ս Ա Խ Օ Ս ՈՒ Յ Ի Ի Ն Ն Ե Ր Ը

	Ճ Ի Ի Ղ Ե Ր Ը	Վրասիայ	Կրտսերներ	Կրտսեր	Երեք	Երկուսուկուս Առաջ
		պահ	պահ	պահ	պահ	պահ
1	Կրօնագիտութիւն	1	1	—	—	—
2	Հայերէն Լեզու	4	5	5	3	3
3	Օսմաներէն Լեզու	3	3	3	3	4
4	Ֆրանսերէն Լեզու	4	6	6	4	5
5	Անգլիերէն Լեզու	—	—	2	2	2
6	Գերմաներէն Լեզու	—	—	2	2	2
7	Պատմութիւն	2	2	2	1	2
8	Պատմ. Քաղաքակրթութեան	—	—	—	—	1
9	Աշխարհագրութիւն	1	2	2	1	1
10	Ուսողութիւն	4	5	5	4	6
11	Պատմ. Մատենագրութեանց	—	—	—	—	4
12	Գրագիտութիւն	—	—	—	1	—
13	Քաղ. Տնտեսութիւն	—	—	—	—	1
14	Օրէնագիտութիւն	—	—	—	—	2
15	Փիլիսոփայութիւն	—	—	—	—	3
16	Մանկավարժութիւն	—	—	—	—	1
17	Բարոյագիտութիւն	—	1	1	—	1
18	Բնագիտութիւն	—	—	—	2	2
19	Բնալուծութիւն	—	—	—	2	1
20	Երկրագործութիւն	—	—	—	1	1
21	Բնական Պատմութիւն	3	2	3	1	2
22	Առեւտր. Ուսողութիւն	—	—	—	—	1
23	Տոմարակալութիւն	—	—	—	2	4
24	Ուսումն. վճռկն. նիւթոց	—	—	—	—	1
25	Առողջաբան. Բնախօսութիւն	—	—	—	1	1
26	Գծագրութիւն	1	1	1	1	1
27	Գեղագրութիւն	2	2	1	—	—
28	Երաժշտութիւն	—	2	1	1	1
29	Կենցաղագիտութիւն	—	—	1	—	—

Այս ցուցակը կը յայտնէ 1910-11 շրջանին մէջ իւրաքանչիւր դասարանի առած դասերը եւ ասոնց ժամերուն թիւը: Աւագ, Երիցագոյն կարգերու ճիւղերէն ոմանք թէպէտ զանազան բաժիններու մէջ կը դասաւանդուին սակայն անոնց ժամերը մէկ սիւնակի մէջ ամփոփած ենք. այսպէս ուսողութեան համար նշանակուած 6 ժամուան 5ը գիտական բաժինին կը վերաբերի, իսկ մէկը բոլոր դասարանին: 1909ին էր երբ առաջին անգամ ունեցանք երեք բաժիններ. այս բաժիններուն աշակերտները հաւաքաբար հետեւած են լեզուի բոլոր դասերուն, հայերէնի, օսմաներէնի, ֆրանսերէնի եւ ըստ կամս անգլիերէնի կամ գերմաներէնի. նաեւ բոլորին պարտաւորիչ ըրած ենք իմաստասիրութեան, պատմութեան, աշխարհագրութեան, ընկերական գիտութեանց, բնական գիտութեանց դասերը. մասնաւորուեցան միայն Ուսողական, Առեւտրական եւ Գրական դասաւանդութիւնները:

Աշակերտները մեծամասնութեամբ գնահատելի աշխատութիւն մը ունեցան այս շրջանին: Բոլոր ուսուցիչները Տնօրէնութեանս իրենց դասաւանդած ճիւղերուն լաւ պատրաստուելու մասին միշտ զոհունակութեամբ խօսած են: Օսմաներէնի դասը, բազմահմուտ մասնազետ Ստեփան էֆ. Կուրտիկեանի հոգածութեան առարկան է վարժարանին մէջ. մեծ խնամքով աւանդուեցաւ եւ աշակերտները իրենց ուշադրութիւնը եւ ջանքը նուիրեցին կառկառուն եւ յաջող արդիւնքներ ձեռք ձգելով:

Ֆրանսերէնն նոյնքան հոգածութեան առարկայ եղաւ. Մ. Լէօպազըօսանքներու եւ ճաշերու պահուն միշտ աշակերտներով շրջապատուած էր եւ խօսակցութեան մէջ անոնց հետ. իւր դասաւանդութիւնները շատ մեթոտիկ եղան եւ հետեւապէս օգտակար. փոքրիկներն ալ ունեցան իրմէ դասեր: Ֆրանսերէնի դասաւանդութեան համար ընդունուած մեթոտը (Méthode directe) փայլուն արդիւնքներ տուաւ ի ձեռին Արամ էֆ. Նիկողոսեանի եւ Լեւոն էֆ. Թաշճեանի:

Արամ էֆ. Նիկողոսեան Կրտսերագոյն եւ Երախայ կարգերուն զծագրութեան դաս մը ըրաւ D'après nature մէթոտով. տարեկան քննութեանց վարժարանս պատուող այցելուները հետաքրքրութեամբ դիտեցին 10-13 տարեկան այս տղաքներուն յաջող զծագրութիւնները նամանաւանդ նկատելով առհասարակ դասարանին բոլոր աշակերտներուն յաջողութիւնը. կ'ըսուի թէ զծագրութիւն ընելու համար մասնաւոր տաղանդ մը անհրաժեշտ է. ճիշտ է այս կարծիքը երբ խնդիր է ինքնուրոյն

մեծ գործ մը արտադրել. բայց համոզուած ենք թէ եթէ աշակերտներուն խնամքով եւ ընտիր մեթոտով մը ուսուցուին գծագրութիւնը եւ առ հասարակ բոլոր գեղարուեստները, կարելի է իւրաքանչիւր աշակերտի մէջ արթնցնել անհրաժեշտօրէն հոն պահուած գեղագիտական տրամադրութիւնները:

Գնահատելի է նաեւ վարժարանին երգչախումբը զոր առաջնորդեց էտկառ Մանաս, քաղաքիս «Քնար» նուագախումբին պետը. մեր երգչախումբին աշակերտ-անդամները ինքզինքնին ծափահարել տուին զանազան առիթներով. արուեստին գիտակ անձնաւորութիւններ կրցան գնահատել երգերուն մէջ կանոնաւորութիւնը եւ նրբութիւններու արտայայտութիւնը:

Կոմիտաս վարդապետի խմբերգներուն յատկապէս ուշադրութիւն նուիրեց Տնօրէնութիւնը. Գութաներգը եւ Շողերջանը երգուեցան. աւելի մեծ տեղ մը պիտի տանք յաջորդին՝ երգերու ծրագրին մէջ Հայկական երաժշտութեան:

Ձեռական աշխատութիւնները այս շրջանին չկրցան տեղի ունենալ. սակայն յաջորդ Սեպտեմբերէն Երախայ եւ Կրտսերագոյն կարգերուն համար վերստին պիտի հաստատենք Découpageի, Modelageի դասեր, Կրտսեր դասարանին համար ատախճագործութեան դասեր, Երէց Երիցագոյն եւ Աւագ կարգերուն մէջ հողագործութեան վարժութիւններ:

Յաջորդ շրջանին Երախայից կարգերը պիտի բաժնուին Երախայք Ա. եւ Բ., եւ Երախայք Գ. դասարաններու:

Աւագ Երիցագոյն դասարաններու երեք հատուածներուն մասին առանձինն կը հաղորդենք իրենց վիճակը:

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԱԾ

Ուսուցիչները, Գառնիկ էֆ. Շէհրիկեան, Նէճմէտտին պէյ, Գարեգին էֆ. Գավաֆեան, Իգնատիոս էֆ. Մուրատեան, Գառնիկ էֆ. Սիրունեան. ականդուեցան հետեւեալ ճիւղերը. Տոմարակալութիւն 4 ժամ, Առետրական ուսողութիւն 1 ժամ, Ուսումն վաճառելի նիւթերու 1 ժամ, Առետրական իրաւաբանութիւն 1 ժամ, Առետրական թղթակցութիւն Անգղիերէն 1 ժամ:

ԳԻՏԱԿԱՆ ՀԱՏՈՒԱԾ

Ուսուցիչներ, Տնօրէնը, Գարեգին էֆ. Գավաֆեան, Իգնատիոս էֆ. Մուրատեան: Աւանդուած դասերը եղան. Վերլուծական Երկրաչափութիւն 1 ժամ, Մասնագիտական Գրահաշիւ 1 ժամ, Գծագրական Երկրաչափութիւն 1 ժամ, Եռանկիւնաչափութիւն 1 ժամ, Ուսողական վարժութիւններ 2 ժամ, Հանքաբանութիւն 1 ժամ, Գործարանաւոր Քիմեագիտութիւն 1 ժամ, Մասնագիտական Բնագիտութիւն 1 ժամ:

Տնօրէնը Աւագ կարգի աշակերտներուն ըրաւ Calcul infinitesimalի սկզբնաւորութիւն մը պատրաստելու համար անոցմէ Բարիզի Ecole des ponts et chaussées մտնել փափաքողները մտից քննութեան: Տեղի ունեցան նաեւ Եռանկիւնաչափութեան գործնական փորձեր:

Քիմիագիտական աշխատանոցին մէջ կատարուեցան գործարանաւոր քիմիագիտութեան փորձեր Մուրատեան էֆէնտիի հսկողութեամբ:

ԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԱԾ

Ուսուցիչներ, Սրամ էֆ. Նիկողոսեան, Ստեփան էֆ. Կուրտիկեան, Միքայել էֆ. Շամտանճեան, Տիգրան էֆ. Զէօկիւրեան, Մ. Էօժէն Լէօպա, Թովմաս էֆ. Աճէմեան, Տիրան էֆ. Զրաքեան: Աւանդուեցան Հայ. արդի Մատենագրութիւն 1 ժամ, Հայերէն Գրաբար մասնագիտական 1 ժամ, Մանկավարժութիւն 1 ժամ, Անգղիական գրականութիւն 1 ժամ, Պատմական շարադրութիւն 1 ժամ, Իմաստասիրական հատուածներու վերլուծում 1 ժամ, Յոյն եւ Լատին Մատենագրութիւն 2 ժամ, Ֆրանսական երեւելի մատենագիրներու հատընտիր գրուածներու վերլուծութիւն 1 ժամ, Պարսկերէն եւ Արաբերէն 1 ժամ: Յաջորդ շրջանին Շահան էֆ. Պէրպէրեան այս հատուածին մէջ պիտի աւանդէ կարգ մը մանկավարժական եւ ընկերական գիտութեանց դասեր:

1911 ՏԱՐԻՈՅ ՄԵՐ ՇՐՋԱՆԱԽԱՐՏՆԵՐԸ

Այս տարի կ'ունենանք 19 շրջանաւարտներ. այլոց մէջ ամենէն բեղմնաւորը կը հանդիսանայ այս տարին:

Յետագայ ցանկին մէջ կը ներկայացնենք շրջանաւարտներուն անունները եւ ծննդավայրերը :

1. Օճնիկ Փափագեան,	Գիտական ,	Ռոստոյո
2. Մարտիրոս Աղլամիճեան,	Առեւտրական ,	Թիւրքոյոյ
3. Արսէն Պալեան,	Գիտական ,	Սպարբայ
4. Հայկ Նշանեան,	Առեւտրական ,	Սիլիվրի
5. Քերովբէ Կոստանդեան,	Գրական ,	Սիլիվրի
6. Զաւեն Յակոբեան,	Գիտական ,	Իւսիլիսար
7. Յարութիւն Մեարոպեան,	Գիտական ,	Պոլսեցի
8. Բարունակ Ալիսանեան,	Գիտական ,	Պոլսեցի
9. Յովնաննէս Տեփեանեան,	Գրական ,	Հալեպ
10. Արմենակ Թանմագեան,	Առեւտրական ,	Տրապիզոն
11. Հրաչեայ Թանմագեան,	Գիտական ,	Տրապիզոն
12. Օճնիկ Փանոսեան,	Առեւտրական ,	Իւսիլիսար
13. Սիսակ Սմբատեան,	Գիտական ,	Իւսիլիսար
14. Վահան Խարբուքեան,	Գիտական ,	Իւսիլիսար
15. Վահրամ Գավաթեան,	Գիտական ,	Իւսիլիսար
16. Յովնաննէս Աբելեան,	Առեւտրական ,	Պոլսեցի
17. Զօհրայ Բագրեւանդեան,	Առեւտրական ,	Պոլսեցի
18. Յակոբ Եղիաեան,	Առեւտրական ,	Պոլսեցի
19. Յարութիւն Գալբաբեան,	Առեւտրական ,	Պոլսեցի

Պարոնայք Հմայեակ Մանուկեան եւ Ստեփան Մանուկեան, մասնաւոր պայմաններ լրացնելէ վերջ պիտի ստանան իրենց վկայականը, հիւանդութեան պատճառով չի կարենալով հասնիլ իրենց ընկերներուն :

Շրջանաւարտները պատրաստեցին աւարտական շարադրութիւններ որոց նիւթերը ստորեւ կը ներկայացնենք :

L'hypothèse dans la science.	Ֆրանսերէն ,	Օճնիկ Փափագեան
Ժառանգականութիւն	Անգլիերէն ,	Մարտիրոս Աղլամիճեան
Կինը	Օսմաներէն ,	Արսէն Պալեան
Առեւտուր	Օսմաներէն ,	Հայկ Նշանեան
Հայ. Հին Բանաստեղծութիւնը.	Հայ. Գրաբար ,	Քերովբէ Կոստանդեան
Տարվիականութիւն	Հայ. Աշխրհքք.	Յարութիւն Մեարոպեան
Նիչե եւ Շօքենաուեր	»	Բարունակ Ալիսանեան
Կրօնք եւ իւ դերը	»	Յովնաննէս Տեփեան

Ֆրանս. Յեղափոխութեան պատճառները	»	Օճնիկ Փանոսեան
L'Aviation	Ֆրանսերէն ,	Սիսակ Սմբատեան
La Musique	»	Արմենակ Թանմագեան
Եգիպտոսի Քաղաքապետութիւնը, Գեղարուեստներու իմաստասիրութիւն	Հայ. Աշխրհքք.	Հրաչեայ Թանմագեան
Պղատն եւ իւր վարդապետութեան արդի ձեւը	»	Վահան Խարբուքեան
Ազատ փոխանակութիւն	»	Վահրամ Գավաթեան
Իմացականութիւնը	»	Յովնաննէս Աբելեան
Իսլաւացի նկարիչները	»	Զօհրայ Բագրեւանդեան
Արուեստի դերը ընկերութեան մէջ	»	Յարութիւն Գալբաբեան

Հմայեակ Մանուկեան եւ Ստեփան Մանուկեան ալ պատրաստեցին աւարտական շարադրութիւններ :

ՆԿԱՐՉԱԿԱՆ ՅՈՒՑԱԴՐՈՒԹԻՒՆ

Ամէն շրջանի վերջ սովորութիւն եղած է շրջանաւարտ կարգի քննութեանց սրահը զարդարել տարւոյն ընթացքին աշխատուած նկարներով. այսպէսով ակնահաճոյ տեսարան մը պարզուած է միշտ այցելուին. այս նկարները երբեմն մեծ համեմատութիւններ ունին եւ փոքրիկ ցուցահանդէսի մը տպաւորութիւնը կարելի է կրել դիտելով զանոնք :

Այս անգամ շատ հաճելի սրահ մը ունեցանք դարձեալ, վարժարանին վաղեմի եւ տաղանդաւոր ուսուցչին Սիմօն էֆ. Յակոբեանի ունեցած խնամտ դասատուութեան շնորհիւ: Գտնուած նկարներուն մէջ ուշադրութիւն զրուեցին Պարոն Գոռուզեանէն Մանուկեան մը, Արաբեանի մը, Պարոն Բագրեւանդեանէն Մանուկեան մը, Մանուկեանի մը, Պարոն Տէվէճեանէն, Ընդամենը, Մեարոպեանի մը, Պարոն Տէվէճեանէն, Բարունակ Ալիսանեանի մը, Մանուկեանի մը, Պարոն Գալբաբեանէն, Թանմագեանի մը, Մանուկեանի մը, Պարոն Սրմբատեանէն, Գեղարուեստի մը, Պարոն Հանէսեանէն Բարունակ Ալիսանեանի մը:

ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՈՒՂՂՈՒԹԻՒՆԸ

Վարժարանին հիմնական ուղղութիւնն է բարոյական առողջ
մը տալ աշակերտներուն զանց չընելով մարմնական կըր-
թութիւնը եւ մտաւոր զարգացման ի նպաստ ամէն հոգածութիւն ունե-
նալով: Քանիցս Հիմնադիրը առիթը ունեցած է պարզելու իւր միտքը
ի մասին հաստատութեան նպատակին որ է ազնուասիրտ եւ լուսամիտ
ընել վարժարանին խնամներուն յանձնուած պատանիները:

Այս ուղղութենէն չենք շեղած երբէք համոզուած որ է ամէն ժա-
մանակներու դպրոցին ուղղութիւնը: Կեանքին համար լաւ զինել աշա-
կերտները մեր ջանքը եղաւ: Բոլոր միջոցները ձգտեցան իրագործելու
մեր նպատակը: Ծնորհակալութիւն կը յայտնենք Պատ. Ուսուցիչներուն
որոնց թանկագին գործակցութիւնը լայնօրէն նպաստեց վարժարանին
այս տարուան յաջող ու բեղմնաւոր ընթացքին. շնորհակալութիւն եւս կը
յայտնենք Պատ. Ծնողաց որոնք պատուեցին զմեզ մեր մասին իրենց
վստահութեամբ զոր պարկեշտ գործունէութենէ մը վերջ ակնկալելը մեր
իրաւունքն է: Ինչ որ Պատ. Ծնողքները կը պարտին իրենց զաւակնե-
րուն ընտիր դաստիարակութիւն մըն է, որ կազմէ անոնց մէջ թէ՛ նկա-
րագիրը, թէ՛ միտքը, թէ՛ մարմինը:

Յարգանօք

ՏԵՕՐԷՆՈՒԹԻՒՆ

1 Յունիս 1911, Իւսկիւսար

ԿՐԹԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԵՒ

ՊԵՐՊԵՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ


Կրթական նախարարութիւնը 1895 թուականէն ի վեր կը ճանշնայ վարժարանը իբր 7 տարուան Իտատիյէ եւ ըստ այսմ կը վաւերացնէ վարժարանին վկայականները:

Ամէն տարեկան քննութեան իւր կողմէ նշանակուած քննիչ մը կ'այցելէ վարժարանը եւ կը տեղեկացնէ կրթական վիճակը: Տարեկան հանդէսին դարձեալ նախարարութիւնը ունի իր ներկայացուցիչը որ Օսմաներէնի եւ միւս ճիւղերուն մէջ յաջողակ աշակերտներուն յանուն Կրթական նախարարին մրցանակներ կու տայ:

ՊԵՐՊԵՐԵԱՆ ՍԳԱՀԱՆԴԵՍԸ

Ապրիլ ամսոյ 14ին կիրակի օրը վարժարանին Հիմնադիր Ռ. Յ. Պէրպէրեանի մահուան 4րդ տարելիցին առթիւ Սգահանդէս մը տեղի ունեցաւ վայելուչ հանդիսաւորութեամբ մը. կազմակերպուած էր Սեծ Դաստիարակ-Գրագետին նախկին Սաներէն: Առաւօտուն ընդ նախագահութեամբ Տ. Յովհաննէս Արք. Արշարունիի տեղի ունեցան եկեղեցական արարողութիւններ, որոնցմէ վերջ կազմուեցաւ հսկայ թափոր մը որ այցելեց գերեզմանը:

Կէս օրէ վերջ Տ. Եղիշէ Արք. Դուրեան նախագահեց Լսարան-Սգահանդէսի մը ուր խօսեցան Յովհաննէս Էֆ. Հինդլեան, Տիրան Էֆ. Զրաքեան եւ Բրօֆ. Յակոբեան՝ Դաստիարակին, Գրագետին եւ Հանրային Գործիչին վրայ. բանախօսներու պերճախօսութիւնը Պէրպէրեանի ղէմքը յաջողութեամբ ներկայացուց եւ ներկաներուն վրայ խոր տպաւորութիւն ներգործեց. Դուրեան Սրբազան փակեց գեղեցիկ վերլուծով մը Պէրպէրեանի ամբողջական գործունէութեան եւ փափաք յայտնեց որ Շիրիմ՝ մը կանգնուի գերեզմանին վրայ Անոր որ Յիշատակարան մ'է: Այս գաղափարը բուն ընդունելութեան արժանացաւ եւ Յանձնախումբ մը կազմուեցաւ որ պիտի զբաղի ի գլուխ հանելու այս ձեռնարկը:



ՎԱՐՉԱՐԱՆԸ, ԿՐԹԱԿԱՆ ՏԵՍԱՐԱՆ

Հ.Ս.Խ. Զ. ՀԱՐՄԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
* С. С. Р. - А Публичная Библиотека
7/11-1922
ИЗДАНИЕ, МЯСНИКОВА
ՍՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎՈՆ

ՆԱԽԿԻՆ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ
ՊԷՐՊԷՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Գ. ԶԱՔԱՐԵԱՆ	ԿՈՃԻԿ
Ա. ԳԱՐԱՄԱՅՈՍԵԱՆ	Հ. ՊԷՐՊԷՐԵԱՆ
Յ. ՍԵՔԵԱՆ	Յ. ՇԱՀՆԱԶԱՐ
ROUX	Գ. ՄԱԼԱՅԵԱՆ
CHARLES ROBERTS	ՍԱԼԻՀ ԶԷՔԻ ՊԷՅ
FERDINAND PHILIPPE	ՅՈՎՍԷՓ ՃԷԼԱԼԵԱՆ
Մ. ՏԻՐԱՅՈՒԵԱՆ	ՏՈՔՔ. Վ. ՅՈՐԳՈՄԵԱՆ
Ս. ՍՈՒՐԷՆԵԱՆ	ՏՈՔՔ. ՇԱՀԻՆԵԱՆ
Ն. ՍԻՄՈՆԵԱՆ	MAGNUS
Ա. ԱՌԱՆԶԱՐ	PIGOZZI
Մ. ԱԲԻԿԵԱՆ	Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ
Խ. ՅԱՀՅԱՅԵԱՆ	Մ. ՅՈՐՈՍԵԱՆ
Մ. ԱՍՔԱՆԱԶ	Ե. ՏԷՐ ԱՆԴՐԷԱՍԵԱՆ
LESCANE	GROS
MARQUIS DE TAMISIER	CHEVREU
MATHEY DUPRAZ	BENOIT
ELSNER	R. CICIRIELO
COURCHÉ	Պ. ԱՏՐՈՒՆԻ
ՋՈԼԱԳԻՏԻՍ	Տ. ՄՈՒՐԱՏԵԱՆ
Գ. ՊԱՐՍԱՄԵԱՆ	LARACINE
Ա. ԽՕՐԱՍԱՆՃԵԱՆ	FOUSSAT
Յ. ՀԻՆԴԼԵԱՆ	Յ. ՄՐՄՐԵԱՆ

ՊԷՐՊԷՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՆԱԽԿԻՆ ՍԱՆԵՐՈՒՆ
ԸՆԴԳՐԿՍԾ ԱՍՊԱՐԷՋՆԵՐՈՒՆ ՑՈՒՑԱԿԸ

	Թիւ	Սաներու.
Վաճառական		66
Առեւտրական պաշտօնեայ		66
Պետական, Ազգ. եւ հանրային հաստատութեանց պաշտօնեայ		20
Ուսուցիչ		20
Բժիշկ		12
Արուեսագէտ		3
Փաստափան		2
Կրօնական		1
Ճարտարագէտ		5
Ճարտարապետ		3
Խմբագիր		3

Հանաչաւարանական ռասլոնդ եւն 27 սաներ հոս կաւ Եւրոպա:

ՇՐՋԱՆԱԽԱՐՏՔ ՊԵՐՊԵՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ(*)

1876—1909

1878

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԱՐԱՄԵԱՆ
ՀԱՄԱՐՁՈՒՄ ՊԵՐՊԵՐԵԱՆ
ԼԵՒՈՆ ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

Ֆիլիպի
Գահիրե
Կ. Պոլիս

Վաճառակ. Յանձնակատար
Առևտրական
Պետ տոմարակալութեան Հան.
պարտուց վարչութեան

1882

ՄԱՏԹԷՍ ԵԿԷՆԵԱՆ
ՅՈՎՀԱՆՆԵՍ ՀԻՆԳՂԵԱՆ

Կ. Պոլիս
Կ. Պոլիս

Օամ. Վարժապետանոցի Բ Տնօրէն
Տնօր. «Նոր Դպրոց»-ի Մանկա-
վարժ

ՆՇԱՆ ԳԱԼՖԱՅԵԱՆ

Կ. Պոլիս

Ուսուցիչ Հալգալըի Երկրժ. Վար-
ժարանին, և Երկրագործական
Նախարարութեան Գիտ Տիւղին
օգ. Տնօրէն

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԷՆԵԱՆ
ԿԱՐԱՊԵՏ ՏԷՄԻՐԵԱՆ
ԳԷՈՐԳ ԿԻՐԵՂԵԱՆ
ԵՐՈՒԱՆԳ ՍԵՂՐՈՍԵԱՆ
ՆԻԿՈՂՈՍ ԲԱՇԱԼԵԱՆ

†
Պրուսա
Կ. Պոլիս
Ռոմանիա
†

Ուսուցիչ
Փաստարան
Վաճառական

1883

ԹԱԳԻՈՐ ԿԱՐԱԿԷՕՋԵԱՆ
ԼԵՒՈՆ ԲԱՇԱԼԵԱՆ

Փարիզ
Պագոշ

Սեղանաւոր
Տնօրէն Ֆրանսական Նաւթային
շահագործման Ընկերութեան

ԳՐԻԳՈՐ ՆԷՎՐՈՒՋ
ԼԵՒՈՆ ՇԱՀՊԱՋԵԱՆ
ՊԵՏՐՈՍ ՄԱՆՈՒՆԵԱՆ
ՅԱԿՈՐ ԱՐԱՊԵԱՆ

†
†
Կ. Պոլիս
Կ. պոլիս

Բժիշկ
Արձանագործ

(*) Վարժարանին շրջանաւարտներէն կը խնդրենք որ բարեհաճին իրենց հասցէները
մանրամասնութեամբ Տնօրէնութեանս հաղորդել:

1885

ԳՐԻԳՈՐ ՃԷՎԱՀԻՐՃԵԱՆ
ՄԻՀՐԱՆ ՄՈՋԵԱՆ
ՄԻՀՐԱՆ ԳԱԼՖԱՅԵԱՆ
ՎԱՀՐԱՄ ԹԱԳԻՈՐԵԱՆ

Կ. Պոլիս
Կ. Պոլիս
†
†

Առևտրական
Ուսուցիչ

1886

ԱՐՏԱՇԷՍ ՖԷՍԼԵԱՆ
ՊՕՂՈՍ ԷՍՄԷՐԵԱՆ
ՍՈՒՔԻԱՍ ԷՍՄԷՐԵԱՆ

Ասա-Բագար
Փարիզ
Կ. Պոլիս

Վաճառական
Առևտրական
Առևտրական

1887

ԱՐՏԱՇԷՍ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ
(ԻՆՂԱՐԵՐԵԱՆ)
ԱՐԻՍՏԱԿԷՍ ՖԷՍՏԵԱՆ
ԿԱՐԱՊԵՏ ԽՈՐԱՍՆԵՃԵԱՆ
ՓԱՌՆԱԿ ԲԻՍՍԻԻԼԵԱՆ
ՄԻՀՐԱՆ ՍԷՄԷՐՃԵԱՆ
ԱՐԱՄ ՆԻԿՈՂՈՍԵԱՆ

Ռուսմանիա
Սերպիա
Կ. Պոլիս
†
Կ. Պոլիս
Կ. Պոլիս

Առևտրական
Դեր-Հիւլպտոս Վրանիոյ
Վաճառական

Վաճառական
Բ. Տնօրէն Պէրպիւրեան Վարժա-
րանի, Մանկավարժ

1888

ԵՐՈՒԱՆԳ ԳԱՐԱՅԵԱՆ
ՄԻՀՐԱՆ ՍԱՐԱՖԵԱՆ

Կ Պոլիս
Կ. Պոլիս

Վաճառական
Մաքս. Վերատեսչութեան Հակա-
կշռի ղիւանի Տնօրէն

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՏԷՄԻՐԵԱՆ
ՍԷԹ ԱՍԼԱՆԵԱՆ
ՍՏԵՓԱՆ ԱՍԼԱՆԵԱՆ
ՊՕՂՈՍ ԳՈՂՈՒԵԱՆ
ԵՐՈՒԱՆԳ ՍԵՂՐՈՍԵԱՆ
ԵՐՈՒԱՆԳ ԼԱԹԻՖԵԱՆ

Ռոստար
Փարիզ
Աֆիոն-Գարսիլիսար
Փարիզ
Պոսթըն
Կ. Պոլիս

Վաճառական
Առևտրական
Վաճառական
Բժիշկ
Առևտրական
Բերայի դատարանաց զործադիր
իշխանութեան պետ
Դիւանապետ Արտաքին Գործոց
Նախարարութեան

ԼԵՒՈՆ ՍՈՒՐԷՆԵԱՆ

Կ. Պոլիս

ԱՐՇԱԿ ԷՍԱՆԵԱՆ
ԱՐՄԵՆԱԿ ՊԷՏԷՐԵԱՆ

Կ. Պոլիս
Կ. Պոլիս

Վաճառական
Առևտրական

1889

ԳԱՌՆԻԿ ՍԻՆԱՆԵԱՆ
ՅԱԿՈՐ ՔԷՀԵԱՅԵԱՆ
ՔԱՐԹՈՂ ՓԱՐՔԱՄԵԱՆ

Կ. Պոլիս
Մանչեսթըր
Կ. Պոլիս

Խմբագիր «Սպասն» լրագրի
Առևտրական
Առևտրական

1890

ԳԱԼՈՒՍՏ ՓԱՓԱԶԵԱՆ (ՀԱՅՐ
ՆԵՐՍԷՍ ՎՐԳ)
ԽԱԶԻԿ ՀԷՔԻՄԵԱՆ
ՅԱԿՈՒ ՓԱՓԱԶԵԱՆ
ՅԱԿՈՒ ՅԱԿՈՒՅԱՆ
ՄԻՀՐԱՆ ԵԱԶԸՃԵԱՆ
ՄԻՔԷ ԱՐԱՊԵԱՆ
ԼԵՒՈՆ ԹԱՇՃԵԱՆ
ԿԱՐԱՊԵՏ ՔԷՀԵԱՅԵԱՆ
ՊԵՏՐՈՍ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄՈՒՐԱՅԵԱՆ

Կ. Պոլիս
Օրհու
Կ. Պոլիս
Փարիզ
†
Մանչեսթըր
Կ. Պոլիս
Կ. Պոլիս
Կ. Պոլիս
Կ. պոլիս

Կրճնական
Վանառական
Վանառական
Յանձնակատար
Առեւտրական
Ուսուցիչ Պէրպէրեան Վարժարանի
Առեւտրական
Տնօրէն համանուն վարժարանի
Առեւտրական

1891

ՏԻՐԱՆ ՄԷՏՄԱՐԵԱՆ
ԱՌԱՔԵԼ ՓԱՇԱՅԵԱՆ
ԿԱՐԱՊԵՏ ՊԱՍՄԱՃԵԱՆ
ԳԷՈՐԳ ՀԱՆԸՄԵԱՆ
ՅԱԿՈՒ ՕՀԱՆԵԱՆ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՏԷՄԻԳԱՐՈՒԼԵԱՆ
ՎԱՀԱՆ ՄՈՍՏԻՉԵԱՆ
ՄԱՐԳԱՐ ԹԱԳԷՈՍԵԱՆ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՓԱՓԱԶԵԱՆ
ՏԻՐԱՆ ԶՐԱՔԵԱՆ
ՊԵՏՐՈՍ ԳԱԼՅԱՅԵԱՆ
ԳԱՐԻՔԷԼ ՍԷՔԵԱՆ

Նիւ Եօրթ
Սաւանն
Օսկաւ
†
Գահիրե
†
†
†
Փարիզ
Կ. Պոլիս
Կ. Պոլիս
Կ. Պոլիս
Պաղսաս

Առեւտրական
Առեւտրական
Առեւտրական
Առեւտրական
Բժիշկ
Առեւտրական
Ուսուցիչ, Գրագետ
Պաշտօնեայ Անատոլուի Երկա-
Սուղոյ վարչութեան
Բժիշկ

1892

ՄԻՀՐԱՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ
ԱՐՏԱՒԱԶԻ ԽԱՆՃԵԱՆ
ՄԻՍԱՔ ՊԶՏԻԿԵԱՆ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ
ԱՐՐԱՀՈՄ ԽԱԶԻԿԵԱՆ
ԿԱՐԱՊԵՏ ՄԵԼԻՏՈՍԵԱՆ
ԿԱՐԱՊԵՏ ՈՒԶՈՒՆԵԱՆ
ԱՐԱՄ ՄԱՐԿՈՍԵԱՆ
ՄԿՐՏԻՉ ՔԻՐԻՔՃԵԱՆ
ՄԻՔԱՅԷԼ ԳՈԼՈԼԵԱՆ
ԱՐՄԵՆԱԿ ՄՍԵՐԵԱՆ
ԱՊՐԻ ԱՊՐԻԵԱՆ

Ասանա
Փարիզ
Միւսիմ
Ասանա
Սիւ
Կ. Պոլիս
Պանչըրմա
Կ. Պոլիս
Կ. Պոլիս
Պրիսխեշ
Պանչրմա
Գուշ-Ասա

Բժիշկ
Առեւտրական
Հաշուակալ Ռէժիի Վարչութեան
Վանառական
Տնօրէն Ազգ. Վարժարանի
Ճարտարագետ
Առեւտրական
Յանձնակատար
Առեւտրական
Վանառական
Առեւտրական

1893

ԱՂԵՔՈՒՆԴ ԵԱՔԷԼԵԱՆ
ԿԱՐԱՊԵՏ ՍԻՐԱՔԵԱՆ
ԱՐՄԵՆԱԿ ՊԱՂՏԱՏԼԵԱՆ
ՍՏԵՓԱՆ ԲԱՐԷԼԵԱՆ
ՆՇԱՆ ՃԻԶՄԷՃԵԱՆ
ԳՐԻԳՈՐ ՃԷՐՐԱՀԵԱՆ
ՅԱԿՈՒ ԱՂՃԵԱՆ
ԱՐՇԱԿ ՅԷՐՄԱՆԵԱՆ

Մանչեսթըր
Կ. Պոլիս
Կ. Պոլիս
Կ. Պոլիս
Գոնիա
Կիլիսյոյու
Գահիրե

Առեւտրական
Վանառական զորգի
Ուսուց. Պէրպէրեան Վարժարանի
Երաժիշտ-Երգահան
Վանառական
Անանարոյժ
Առեւտրական
Վանառական

1894

ՄԱՐՏԻՐՈՍ ՆԱԼՊԱՆՏԵԱՆ
ՍՏԵՓԱՆ ՄԷՏՄԱՐԵԱՆ
ՊՕՂՈՍ ԿԱՐՄԻՐԵԱՆ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ՅՐԷՆԿԵԱՆ
ԳԱՌՆԻԿ ՇԷՀՐԻԿԵԱՆ
ՀՐԱՆՏ ԱՆԳՐԷԱՍԵԱՆ

Կ. Պոլիս
Կ. Պոլիս
Կ. Պոլիս
Բեքոսքեմե
Կ. Պոլիս
Պերլին

Տնօրէն Ազգ. Կեդրոնական Վար-
ժարանի
Վանառական
»
»
Առեւտրական
Ելեքտրագէտ-Ճարտարագէտ վա-
ճառական

1895

ՄԻՔԱՅԷԼ ԿԻՐՃԵԱՆ
ԳԷՈՐԳ ԳԱՒԻԹԵԱՆ
ԳԷՈՐԳ ԲԷՍԻՔՊԵՇԵԱՆ
ԳԱՐԵԳԻՆ ԻՆՃԷԵԱՆ
ԳՈՒՐԳԷՆ ՄԷՉՊՈՒՐԵԱՆ
ԱՐԱՄ ԱԹՔԱՐԵԱՆ
ՄԻՆԱՍ ԹԻՐԱՊԷՆՏԵԱՆ
ԿԱՐԱՊԵՏ ՅՐԷՆԿԵԱՆ
ԽԱԶԻԿ ԽԱԶՍՈՒՐԵԱՆ

Աղեխաներիս
Էօսկմիշ
Բեքոսքեմե
Իզմիր-Գարսարշ
Կ. Պոլիս
Բեքոսքեմե
Կ. Պոլիս
Բեքոսքեմե
Կ. Պոլիս
ԽԱԶԻԿ ԽԱԶՍՈՒՐԵԱՆ

Առեւտրական, Գրագետ
Վանառական
Երկրաչափ-Ճարտարագէտ
Տեսուչ Ազգ Վարժարանի
Առեւտրական
»
Բժիշկ
Վանառական
Առեւտրական

1896

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԱՍՄԱՃԵԱՆ
ԱՐԹՈՅ ՄԷՉՊՈՒՐԵԱՆ
ԱՐՇԱԿՈՒՐ ԱՇՃԵԱՆ
ԽԱԶԻԿ ՊԱՍՄԱՃԵԱՆ
ԵՐՈՒԱՆԳ ԶԱՅԵԱՆ
ԼԵՒՈՆ ՅԱԿՈՒՅԱՆ
ԼԵՒՈՆ ՍԷՄԷՐՃԵԱՆ
ԿԱՐԱՊԵՏ ՄԱՆԻՍԱԼԵԱՆ

Կ. Պոլիս
Կեմալիշ
Կ. Պոլիս
†
Կ. Պոլիս
Չուքեքիս
Կ. Պոլիս
Պրալլա

Վանառական
Բժիշկ
Վանառական
»
Բժիշկ
Առեւտրական
Վանառական
»

1897

ԼԵՒՈՆ ԳԱԼՈՒՍԵԱՆ

Կ. Պոլիս

Առևտրական

1898

ԱՌԱՔԵԼ ԱՌԱՔԵԼԵԱՆ
ԼԵՒՈՆ ՄԱՌԱՆԿՈՋԵԱՆ
(ՊԱԼՔԱԶԱՐ)
ՊԷՆՈՆ ՊԷԶԱԶԵԱՆ
ՍՄԲԱՏ ԵՐԱՄԵԱՆ
ՏԻԳՐԱՆ ԶԷՐԶԵԱՆ
ԶԱՐԵՀ ՊԱՂԱԼԵԱՆ
ԱՐԻԿ ԱՐԻՍՈՂՈՄԵԱՆ
ԱՐՇԱԿ Տ. ՄՈՎՍԷՍԵԱՆ

Աղեֆսաներիս
Կ. Պոլիս

Ուսուցիչ
Բժիշկ

Է. Պոլիս
Կ. Պոլիս

Բժիշկ
Առևտրական

Կ. Պոլիս
Կ. Պոլիս

Առևտրական
ձարտարապետ

1899

ԲԱՐՍԵՂ ՔԷՇԵՇԵԱՆ
ՅԱԿՈՐ ԳԱԼՅԱՅԵԱՆ
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՐԱՔՃԵԱՆ
ՍԵՊՈՒՀ ՏԱՆԶԻԿԵԱՆ
ՅԱԿՈՐ ՆՈՐՀԱՏԵԱՆ

Կ. Պոլիս

Առևտրական

ԿՈՊԵՌՆԻԿ ՊԷԶԱԶԵԱՆ

Կ. Պոլիս

Պետ Ելեւմտից դիւանի Ազգային
Պատրիարքարանի
Շերամարուծ. բնիչ Հանր. Պար-
տուց Վարչութեան
Պաշտօնեայ Անատոլուի Երկա-
ծուղւոյ վարչութեան

ՀՐԱՆՏ ԳԱՅԸՔՃԵԱՆ

Կ. Պոլիս

Վաճառական
Առևտրական

ԳԷԳԷՕՆ ԶԷՍՄԼԷԿՃԵԱՆ
ԵԳՈՒՐԻ ԳՕԼԱՆՃԵԱՆ

Կ. Պոլիս
Կ. Պոլիս

1900

ՏԻՐԱՆ ԶԱՔԷԵԱՆ
ԱՐԱՄ ՅԷՐՈՒՀԱՆ

Կ. Պոլիս
Կ. Պոլիս

Առևտրական
»

ՊԵՏՐՈՍ ԱՏՐՈՒՆԻ
ՅԱԿՈՐ ՍԱՐԳՍԵԱՆ
ՄԻՀՐԳԱՏ ՆԻԿՈՂՈՍԵԱՆ
ԼԵՒՈՆ ՃԷԶՎԷՃԵԱՆ
ՅՈՎՍԷՓ ՊԷԶԱԶԵԱՆ
ԳԱՍՊԱՐ ՄԱԽՈՒԵԱՆ
ՎԱՀԱՆ ԳԱԼՈՒՍԵԱՆ

Կ. Պոլիս
Կ. Պոլիս
Աթիս-Ապպալա
Կ. Պոլիս
Կ. Պոլիս
Կ. Պոլիս

Պետական պաշտօնեայ Հանր. Կրթ.
Նախարարութեան
Բէշիշեան տպարանի հաշուակալ
Վաճառական
»
Ուսանող իրաւագիտութեան
Առևտրական

1901

ԵՐՈՒԱՆԿ ՀԱԶԱՐԱՊԵՏԵԱՆ
ՊԵՐՃ ՆԱԶԻԿԵԱՆ

Կ. Պոլիս
Կ. Պոլիս

Առևտրական
Պաշտօնեայ Անատոլուի Երկա-
ծուղւոյ վարչութեան

ՄԱՏԹԷՈՍ ՓԱՓԱԶԵԱՆ
ՄԻՀՐԱՆ ՍՈՒՃԵԱՆ
ԱՌՆԱԿ ՃԷՎԱՆԵԱՆ
ՊՕՂՈՍ ԿԱՐՄԻՐԵԱՆ
ԱՐՇԱԿ ՄՍՐԼԵԱՆ
ԵՈՍՐՈՎ ԵԱՐՅՈՒԹԼԵԱՆ
ՄԵՐԿԵՐ ԱԼԻՔՍԱՆԵԱՆ

Կ. Պոլիս
Կ. Պոլիս
Կ. Պոլիս
Կ. Պոլիս
Կ. Պոլիս
Խարթերդ
Սերասիս

Առևտրական
Բժիշկ
Վաճառական
»
Մ. Մանուկեան տան հաշուակալ
Վաճառական
Առևտրական

1902

ՊԱՐՈՅՐ ՔԷԶԵԱՆ
ԵԳՈՒՐԻ ՕՏԱՊԱՇԵԱՆ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԷԹԵԱՆ
ԿԱՐԱՊԵՏ ՀԱՆՔՍԵԱՆ
ՍԱՐԳԻՍ ԹՈՒԼՈՒՔԵԱՆ
ՀՐԱՆՏ ԳԱԶԱԶԵԱՆ
ԱՐԱՄ ՍԷՄԷՐՃԵԱՆ

Կ. Պոլիս
Նաևսի
Փարիզ
Մանչեսթըր
Գարա-հիսար
Կ. Պոլիս
Կ. Պոլիս

Խմբագիր «Բիւզանդիոն»ի
Գիմիագէտ
Բժշկական ուսանող
Վաճառակ. Յանձնակատար
Վաճառական
Առևտրական
Վաճառական

1903

ԳԵՂԱՄ ԳՐԻԳՈՐԵԱՆ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՊԷՐՊԷՐԵԱՆ
ՀԱՅԿ ՂԱԶԱՐՈՍԵԱՆ
ԱՐՄԵՆԱԿ ՊՕՂՈՍԵԱՆ
ՂԱԶԱՐՈՍ ԲԱՐԷԼԵԱՆ
ՏԻԳՐԱՆ ԶԷՕԿԻՐԵԱՆ

Օրսու
Կ. Պոլիս
Կ. Պոլիս
Կ. Պոլիս
Նիւ-Եօրթ
Կ. Պոլիս

Վաճառական
Տնօրէն Պէրպէրեան Վարժարանի
Վաճառակ. Յանձնակատար
Ուսանող Իրաւագիտութեան
Ելեկտրագէտ
Ուսուցիչ, Խմբագրապետ «Ոս-
տան»ի

ԳԱԽԹ ՄՍՐԸԵԱՆ
ԳԱՆԻԷԼ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ
ՄԱՆՈՒԿ ԱՃԷՄԵԱՆ
ԳԱՄԷՐ ՇԻՐԻՆԵԱՆ
ԶԱՐԵՀ ՄԵՄԱՏՈՒՐԵԱՆ
ԿԱՐԱՊԵՏ ԲԷՀԼԻՎԱՆԵԱՆ
ԳՐԻԳՈՐ ԱՐԵԱՆԵԱՆ

Պրիսխէլ
Կ. Պոլիս
Կ. Պոլիս
Կ. Պոլիս
Կ. Պոլիս
Կեյլիե
†

Վաճառական
Առևտրական
»
Գործակատար Ազգ. Պատրիարք.
Հաշուակալ Յ. Թորթալեան տան
Վաճառական

1904

ԳՐԻԳՈՐ ՈՍԿԱՆԵԱՆ
ԲԱՐՍԵՂ ՏԻՆԱՆԵԱՆ
ԳՐԻԳՈՐ ՍՎԱՃԵԱՆ
ՎԱՀԱՐԱՄ ՂՈՒԿԱՍԵԱՆ

Կ. Պոլիս
Փարիզ
Կ. Պոլիս
Կ. Պոլիս

Առևտրական
Բժշկական ուսանող
Առևտրական
Պաշտօնեայ Անատոլուի Երկա-
ծուղւոյ վարչութեան

ԱՆՈՒՆ ՊԱՊՈՆԵԱՆ

ԶԱՐԵՉ ԶԱՔԱՐԵԱՆ
ՄԿՐՏԻՉ ԷՐԲԻԼԷԹԵԱՆ
ՎԱՀՐԱՄ ԵՔՄԷՆԻՃԵԱՆ
ԵՐՈՒԱՆՎ ՄԵՍՐՈՊԵԱՆ
ԳՐԻԳՈՐ ԱԼԷԱԹՃԵԱՆ
ՀՐԱՆՏ ԳԱՐԲԻԷԼԵԱՆ
ԵԳՈՒԱՐԳ ՓԱՓԱԶԵԱՆ
ՊԵՏՐՈՍ ՊԱԼԸՔՅԵԱՆ
ՀՐԱՆՏ ՊԱՂՏԻԿԵԱՆ
ԳՐԻԳՈՐ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ
ԵՐՈՒԱՆՎ ԿԻԼԻՊԷՆԿԵԱՆ
ԹՈՒՄԻԿ ԱՔՏԷՅՅԵԱՆ

Կ. Պոլիս

Կ. Պոլիս
Սամսոն

Կ. Պոլիս

Կ. Պոլիս

Կ. Պոլիս

Կ. Պոլիս

Կ. Պոլիս

Կ. Պոլիս

Կ. Պոլիս

Կ. Պոլիս

Սամսոն

Աղեխանդրիս

1905

ՈՒՌԲԷՆ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ
ԹՈՐՈՍ ՍՅՅԵԱՆ
ԱՇՈՏ ԻԹԹԻՃԵԱՆ
ՄԻՆԱՍ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ
ԵԶՆԻԿ ՔԱԶՈՒՆԻ
ՇՆՈՐԷՔ ՏԷՅԻՐՄԷՆՃԵԱՆ
ԱՐԱՄ ԶԱՐՅՅԵԱՆ
ԼԵՌՆ ԵՍՎՐՈՒՆԵԱՆ
ՊԵՏՐՈՍ ՄԱԼԵԱՍԵԱՆ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ՀՄԱՅԵԱՆ
ԳԵՂԱՄ ԳԱՎԱՅԵԱՆ

Լոզան

Կեյվիե

Կ. Պոլիս

Ֆիլիպե

Կ. Պոլիս

Կեյվիե

Կ. Պոլիս

Կ. Պոլիս

Կ. Պոլիս

Էսկի-Շեհիր

Փարիզ

Չեմսկիեր

Կ. Պոլիս

Զոնկոչսաբ

Կ. Պոլիս

Կ. Պոլիս

1906

ՏԷՎԼԷԹ ԳԷՐԳԵԱՆ

ԱՐՇԱԿ ՊԱՊԻԿԵԱՆ
ՆԵՐՍԷՍ ՄԱԼԵԱՍԵԱՆ
ՇԱՀԱՆ ՊԷՐՊԷՐԵԱՆ
ԳԱԻԹ ԲԱՌՆԱՐԱՍԵԱՆ

Փարիզ

Կ. Պոլիս

Փարիզ

Կ. Պոլիս

ԹԱԳՈՐ ՏԷՐՄԷՆՃԵԱՆ
ՄԿՐՏԻՉ ՏԷՐՎԼԷԹԵԱՆ
ԳԱՐԵԳԻՆ ԱՄԱՏԵԱՆ

Կ. Պոլիս

Լոզան

Վեմեսիկ

Պաշտօնեայ Անատոլուի Երկա-
թուղու վարչութեան
Վաճառական
Առևտրական

»

»

»

»

»

»

»

»

»

»

»

»

»

»

»

»

»

»

»

»

»

»

»

»

»

»

»

»

»

»

»

»

»

»

»

»

»

»

»

»

»

»

Ուսանող Մամեմաթիական գի-
տութեանց
Առևտրական

Տօթոր խնամատարութեան
Պաշտօնեայ Անատոլուի Երկա-
թուղու վարչութեան

Առևտրական
Ուսանող ճարտար. գիտութեանց
Ուսանող

ՎԱՀԱՆ ԻՍՊԻՐԵԱՆ
ՏԻՐԱՆ ԹԱՇՃԵԱՆ
ՕՆԵԻԿ ԳՕՃԱՊԸՅԸԳԵԱՆ
ԹՈՐԳՈՍ ՄՈՒԹԱՅԵԱՆ
ԵՐՈՒԱՆՎ ԱՆԳՐԱՆԻԿԵԱՆ

Փարիզ

Կ. Պոլիս

Կ. Պոլիս

Դարբալ

†

1907

ԵՐԱՆՈՍ ՀԱՊԷՇԵԱՆ
ՎԱՀՐԱՄ ԶՈՒԵԱՃԵԱՆ
ՊԷՐՃ ՍԱԱԹՃԵԱՆ

Կ. Պոլիս

Փարիզ

Կ. Պոլիս

ԳԷՐԳ ԳԻԼԻՊՊՈՍԵԱՆ
ԼԵՌՆ ՈՒՐԲԷՆԵԱՆ
ՎԱՀՐԱՄ ԳԵՐՉԱԿԵԱՆ
ԵՐՈՒԱՆՎ ԱՆԳՐԱՍԵԱՆ

Ռոստոփ

Կ. Պոլիս

Կ. Պոլիս

Օրսու

ՕՆԵԻԿ ԿԷՆՃԵԱՆ
ԳԱՐԲԻԷԼ ՊԱՍՄԱՃԵԱՆ
ԳՐԻԳՈՐ ՇԱՀԻՆԵԱՆ

Կ. Պոլիս

Կ. Պոլիս

Կ. Պոլիս

ԶԵՆՈՐ ՍՈՒՐԷՆԵԱՆ
ՎԱՀՐԱՄ ԱՆԳԵՐ

Սեչանիկ

Կ. Պոլիս

1908

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԲԻՐՏԵԱՆ
ՀԵՐՄՈՆ ԹԱՇՃԵԱՆ
ԿԱՐԱՊԵՏ ԳԱՎԱՅԵԱՆ

Կ. Պոլիս

Կ. Պոլիս

Կ. Պոլիս

ՅԱԿՈՐ ԲԷՇԷՇԵԱՆ
ՄԻՀՐԱՆ ԷՔՍԷՐՃԵԱՆ
ԿԱՐԱՊԵՏ ԷՔՍԷՐՃԵԱՆ

Կ. Պոլիս

Կ. Պոլիս

Կ. Պոլիս

ԱՐՄԵՆԱԿ ԳԱՐԱՆՖԷԼԵԱՆ
ԱՐՇԱԿ ԳԱԼԷՄԲԵՐԵԱՆ
ՄԿՐՏԻՉ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Ռոստոփ

Գահիրե

Կ. Պոլիս

ԱՐՄԵՆԱԿ ԲԷՐԷՍԹԷՅԵԱՆ
ՏԻԳՐԱՆ ՍԻՐՄԷՅԵԱՆ

Կ. Պոլիս

Կ. Պոլիս

1909

ՎԱՐԳԱՆ ՍԱՐԳՍԵԱՆ
ՏԻՐԱՆ ԱՆԳՐԱՍԵԱՆ
ՍՈՒՐԷՆ ԳԼԸՃԵԱՆ

Կ. Պոլիս

Օրսու

Թիրեպոլու

Կ. Պոլիս

ՎԱՀՐԱՄ ԹԷՄՊԷՐՃԵԱՆ
ԱՐԱՄ ԱՆԱՄԵԱՆ
ԱՐՏԵՄԻՈՍ ԳԷՐԳՕՅ

Կ. Պոլիս

Կ. Պոլիս

Զախսալա

Կ. Պոլիս

ԿՈՊԵՌՆԻԿ ԹԱՆՏԵՐՃԵԱՆ
ԶԱՏԵՐՍԵՐ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

Կ. Պոլիս

Վաճառական
Առևտրական
Բժշկական ուսանող
Շերամարոյծ

Առևտրական
Ուսանող Իրաւագիտութեան
Ուսանող Կայսերական Միլիթիէ
վարժարանին

Ուսուցիչ
Ուսուցիչ
Dette Publique, Հաշուակալ

Օգնական Գոմիսէր
Խմբագիր «ԵՆԻ Ասքըրի»
Առևտրական

Ուսանող Իրաւագիտութեան
Առևտրական
Ուսանող Կայսերական Միլիթիէ
վարժարանին

Առևտրական
Բժշկական ուսանող
Բժշկական ուսանող
Առևտրական

»
»
»
Ուսուցիչ

Առևտրական
»
»

Ուսանող Իրաւագիտութեան
Ուսանող Իրաւագիտութեան
Առևտրական
Ուսանող Երկրագործ. վարժարանի
Հալգալը
Ուսանող Երկրագործ. վարժարանի
Հալգալը

1910

ԳԷՈՐԳ ՓԱՓԱԶԵԱՆ	Կ. Պոլիս	Ուսանող Իրաւաբանական վարժարանի
ՅԱԿՈՅ ԳԷՂՃԵԱՆ	Թիբեպոլու	Առեւտրական
ԳՐԻԳՈՐ ԳԱՔՐԻԷԼԵԱՆ	Այնթապ	Ուսուցիչ
ՄԿՐՏԻՉ ՊՕՏՈՒՐԵԱՆ	Գասրզիւղ	
ԱՐՇԱԿ ՊԷՍԵԱՆ	Իւսկիւսար	
ՍԱՇԱ ԳԷՈՐԳՕՅ	Թիֆլիզ	
ՏԻՐԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ	Կ. Պոլիս	Ուսանող Իրաւաբանական վարժարանի
ԿԱՐԱՊԵՏ ՆԱՍՊԵԱՆ	Կ. Պոլիս	
ՀՐԱՆՏ ԳԱԼՅԱՅԵԱՆ		
ԵՐՈՒԱՆԴ ԲԷՐԷՍՏԷՃԵԱՆ	Կ. Պոլիս	Ուսանող Իրաւաբանական վարժարանի
ՎԱՀԱՆ ԽԻՒՏԱՎԵՐՏԵԱՆ	Կ. Պոլիս	Ուսանող Իրաւաբանական վարժարանի
ԽՈՐԷՆ ԱՏՈՏՈՐԵԱՆ		

Պէրպէրեան վարժարանի 1911-1912 շրջանը կ'սկսի 1911 Սեպտեմբեր 1 հինգշաբթի օրը. դասերը կ'սկսին յաջորդ հինգշաբթի 8 Սեպտեմբեր: Սեպտեմբեր 1-8 ժամանակամիջոցին պայմանաւոր աշակերտները պարտին իրենց վերաքննութիւնները անցնել:

Ծնողքները կրնան պայմանակցիլ Տնօրէնութեան հետ ամէն ատեն. Օգոստոս 15էն սկսեալ վարժարանին մէջ բանակցութիւնները կը կատարուին:

ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ

Պ Ա Ր Ո Ւ Ն Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Պասկեր, վարժարանը եւ իւր Պարսկըր	Երես 2
Վարժարանին Օրացոյցը	5
Ուսուցչական Մարմին	7
Տօթ. Շահան Էֆ. Պերպէրեան	9
Պասկեր, վարժարանին դարաւոր շինիւնները	12
Պասմականը	13
Պասկեր, Բիմիական աշխատանոցը	18
Կարեւոր տեղեկութիւններ	19
Պասկեր, շաւարանը	22
» Տնօրէնին աշխատութեան սենեակը	26
Տեղեկագիր	27
Պասկեր, Ննջասրահ մը	30
» վարժարանը	42
Կրթական Նախարարութիւն	43
Պերպէրեան Ազահանդես	43
Նախկին Ուսուցիչներ	44
Սաներու ընդգրկած ասպարէզները	45
Շրջանաւարտ	46

« Ազգային գրադարան



NL0239075

7.860

